ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/40755-2021

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ, 70-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Բազմազավակ ընտանիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-075-27.10.2021-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները և պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման վերաբերյալ եզրակացությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1330 - Ա որոշումը:

Հարգանքով՝

**ԱՐԱՅԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-075-27.10.2021-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Բազմազավակ ընտանիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտնում է, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից դեռևս 2021 թվականի ապրիլին շրջանառության մեջ էր դրվել «Բազմազավակ ընտանիքների մասին» օրենքի նախագծի լրամշակված տարբերակը, որը տեղադրված է «e-draft» իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում: Նախարարությունը նախաձեռնել է նաև «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրության ռազմավարություն» փաստաթղթի մշակման գործընթացը, որը կմեկնարկի 2021 թվականի դեկտեմբեր ամսին և նախատեսվում է ավարտին հասցնել 2022 թվականի մայիսին: Ռազմավարությունից բխող միջոցառումների ցանկում կլինի «Բազմազավակ ընտանիքների մասին» օրենքի նախագծի լրամշակված տարբերակը, որն էլ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

Հարկ է նկատել, որ ներկայացված նախագծի որոշ հոդվածներ, առանձին դրույթներ ամբողջապես կամ մասնակի կրկնում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «e-draft» իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրված նախագծի դրույթներին: Ուստի ներկայացված նախագծի հեղինակներին առաջարկում ենք նախագծի դրույթներին անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք նախագծի քննարկումների շրջանակներում:

Այդուհանդերձ ներկայացված նախագծի վերաբերյալ ստորև ներկայացնում ենք որոշ դիտարկումներ.

1. Նախագծի 12-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի վերաբերյալ հայտնում ենք, որ անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության «20.00» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող սոցիալապես անապահով ընտանիքները, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1122-Ն որոշման, ներկայումս օգտվում են սպառվող բնական գազի և էլեկտրական էներգիայի համար հնարավոր նվազ սակագներից.

2) 5-րդ մասի վերաբերյալ հարկ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի.

ա. 224-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ անշարժ գույքի հարկն օրենսգրքի 11-րդ բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, ուստի քննարկման ենթակա է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համայնքի բյուջեի եկամուտներից ֆիզիկական անձանց գումարների վերադարձման վերաբերյալ որոշում

կայացնելու հնարավորությունը,

բ. 230-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ և համայնքի ավագանու սահմանած կարգով կարող է սահմանել անշարժ գույքի հարկի գծով արտոնություններ և դրանց մասով կայացնել անշարժ գույքի հարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարում կատարելու որոշումներ.

3) 6-րդ մասի վերաբերյալ հարկ է նկատի ունենալ, որ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ՝ նույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում են նաև ծնողներից (որդեգրողներից) մեկի՝ մինչև յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը՝ վեց տարվանից ոչ ավելի:

Այս տեսակետից բազմազավակ ծնողի տարիքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժին յուրաքանչյուր երեխայի հաշվառմամբ երեք տարի ավելացնելը չի բխում կենսաթոշակային օրենսդրության քաղաքականության տրամաբանությունից, քանի որ կենսաթոշակի իրավունքն առաջին հերթին փոխկապակցված է անձի աշխատանքային ստաժին, և այլ գործունեության ժամանակահատվածները (այդ թվում՝ երեխաներին խնամելու ժամանակահատվածը) հաշվառվում են օրենքով պահանջվող նվազագույն ստաժի (10 օրացուցային տարի) առկայության դեպքում:

2. 13-րդ հոդվածի վերաբերյալ հարկ ենք համարում տեղեկացնել, որ բազմազավակ ընտանիքների անդամները.

1) օգտվում են պետության կողմից երաշխավորված առողջության առաջնային պահպանման ծառայություններից, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի մարտի 12-ի թիվ 961-Լ հրամանով հաստատված առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բժշկական օգնության և սպասարկման ողջ ծավալից, ներառյալ՝ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններից, ինչպես նաև ըստ բժշկական ցուցումների առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ուղեգրմամբ նեղ մասնագիտական խորհրդատվություններից,

2) պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության և հատուկ ու դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների կազմակերպումը կպահանջի լրացուցիչ ֆինանսական միջոցներ:

3. Նախագծի 17-րդ հոդվածի վերաբերյալ հայտնում ենք, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-Ի N 1183-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1752-Ն որոշման 6-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում, ըստ առաջադիմության, տրամադրում է՝ առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով սովորող՝ երկու և ավելի անչափահաս երեխա

ունեցող ուսանողներին՝ սույն որոշման հավելված հանդիսացող կարգի 11-րդ կետին համապատասխան, որով սահմանվում է ուսանողական նպաստի լրիվ կամ մասնակի զեղչի տրամադրումը:

4. Նախագծի 19-րդ հոդվածի վերաբերյալ հարկ է նկատի ունենալ, որ «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքի 27-րդ հոդվածը կարգավորում է Ծնողական փառքի մեդալով պարգևատրման հարաբերությունները, մասնավորապես, նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ծնողական փառքի մեդալը շնորհվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն ծնողներին (ծնողին), որդեգրողներին (որդեգրողին), որոնք դաստիարակել և դաստիարակում են 6 և ավելի զավակ:

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ նախագծի ընդունման դեպքում լրացուցիչ ծախսը կկազմի շուրջ 34,1 մլրդ դրամ, ուստի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն օրենքների նախագծերը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն պետք է ընդունի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բազմազավակ ընտանիքների մասին» Հայաստանի Հանրա-
պետության օրենքի նախագծի՝ պետական բյուջեի եկամուտների
էական նվազեցման կամ ծախսերի ավելացման վերաբերյալ

Նախագծով նախատեսվում է կարգավորել բազմազավակ ընտանիքների աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները, կարգավիճակը, բազմազավակ ընտանիքներին տրամադրվող աջակցության նպատակը, տեսակներն ու ֆինանսավորման աղբյուրները՝ մասնավորապես, առաջարկվում է սահմանել բազմազավակ ընտանիքներին վճարվող ընտանեկան նպաստի ամսական չափի վերանայման, սպառած էլեկտրաէներգիայի, գազի, ջրի ամսական վարձավճարի մասնակի սուբսիդավորման, բազմազավակ ծնողի համար որոշ չափով օրենքով սահմանված կարգով վճարված եկամտային հարկի գումարը վերադարձի, վճարված գյուղատնտեսական նշանակության հողի հարկի և գույքահարկի գումարը վերադարձի, պարտադիր բժշկական ապահովագրության ապահովման, բնակարանով և տրանսպորտային միջոցով ապահովման, կենցաղային ապրանքի ձեռքբերման, ինքնազբաղվածության ապահովման և երեխաների կրթական աջակցության հետ կապված հարաբերությունները:

Օրենքով կարգավորվող դրույթների համաձայն՝ նախագծով նախատեսվող փոփոխությունները կհանգեցնեն շահառուների շրջանակի ընդլայնման, վերոնշյալ աջակցության չափերի բարձրացման և դրանով պայմանավորված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի ավելացման, որոնց գծով Նախագծին կից ներկայացված հաշվարկների համաձայն՝ առաջարկվող լրացուցիչ ծախսը տարեկան կտրվածքով կկազմի շուրջ 34,1 մլրդ դրամ:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցությանը՝ Նախագծով առաջարկվում է սահմանել, որ՝

1. բազմազավակ ծնողի համար օրենքով սահմանված կարգով վճարված եկամտային հարկի գումարը վերադարձվում է բազմազավակ ընտանիքի յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ եկամտային հարկի ընդհանուր գումարի հինգ տոկոսի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով,

բազմազավակ ծնողի համար օրենքով սահմանված կարգով վճարված գյուղատնտեսական նշանակության հողի հարկի և գույքահարկի գումարը վերադարձվում է բազմազավակ ընտանիքի յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ գյուղատնտեսական նշանակության հողի հարկի և գույքահարկի ընդհանուր գումարի տասը տոկոսի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ նախագծի ընդունումը կարող է հանգեցնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների նվազեցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1330 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Բազմազավակ ընտանիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-075-27.10.2021-ԱՍ-010/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.11.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1.Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բազմազավակ ընտանիքների աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները, կարգավիճակը և Հայաստանի Հանրապետությունում բազմազավակ ընտանիքներին տրամադրվող աջակցության նպատակը, տեսակներն ու ֆինանսավորման աղբյուրները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1.Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **բազմազավակ ընտանիք**՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվող ընտանիք, որում ամուսնական մեկ զույգը, իսկ միածնող ընտանիքի դեպքում՝ միակ ծնողը, «բազմազավակ ընտանիք» կարգավիճակը ստանալու համար դիմելու պահին ծնել և (կամ) որդեգրել են և խնամում են չորս և ավելի երեխա: Ընդ որում, երեխաների թվում հաշվի չեն առնվում սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատուն) խնամվող կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ունեցող երեխաները.

2) **բազմազավակ ծնողներ** (**ծնող**)՝ օրենքով սահմանված կարգով ամուսնության մեջ գտնվող մայր և հայր, որոնք ծնել և (կամ) որդեգրել են և խնամում են չորս և ավելի երեխա **կամ** չորս և ավելի երեխա ծնած կամ որդեգրած և խնամող ընտանիքի միակ ծնող.

3) **բազմազավակ ծնողին հավասարեցված անձ**՝ առանց ծնողների մնացած, ծնողների (կամ միակ ծնողի) մահվան, ծնողական իրավունքից զրկվելու, անգործունակ ճանաչվելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից խուսափելու, անհայտ բացակայող ճանաչվելու, անհայտ լինելու, առողջապահական կազմակերպությունում կամ

ազատազրկման վայրերում գտնվելու, երեխաների առանց ծնողական խնամքի մնալու այլ դեպքերում չորս և ավելի երեխա խնամող այլ անձ.

4) **բազմազավակ ընտանիքի երեխա՝** բազմազավակ ծնողի կամ բազմազավակ ծնողին հավասարեցված անձի խնամքի տակ գտնվող, միևնույն բնակության վայրում հաշվառված և փաստացի բնակվող երեխա (ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության զորակոչված շարքային կազմի ժամկետային զինծառայող՝ մինչև պարտադիր զինվորական ծառայության ավարտը և նախնական (արհեստագործական), միջին կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող՝ մինչև ուսման ավարտը, բայց ոչ ավելի, քան 23 տարին լրանալը).

5) **բազմազավակ ընտանիքի անդամ՝** բազմազավակ ծնողը (ծնողները) կամ բազմազավակ ծնողին հավասարեցված անձը և բազմազավակ ընտանիքի երեխաները:

Հոդված 3. Բազմազավակ ընտանիքների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

1. Բազմազավակ ընտանիքների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, իրավական այլ ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հոդված 4. Բազմազավակ ընտանիքների աջակցության նպատակը

1.Բազմազավակ ընտանիքների աջակցության նպատակն է՝

1) բավարարել բազմազավակ ընտանիքների և նրանց անդամների առաջնահերթ կենսական պահանջմունքները՝ սույն օրենքով սահմանված աջակցության տեսակներին և գնահատված կարիքներին համապատասխան,

2) նպաստել բազմազավակ ընտանիքների և նրանց անդամների կենսապահովմանն ուղղված հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը,

3) կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը,

4) բարելավել ժողովրդագրական իրավիճակը:

ԳԼՈՒԽ 2
ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Հոդված 5. Բազմազավակ ընտանիքի կարգավիճակի տրամադրումը

1. Սույն օրենքով սահմանված հիմքերի առաջացումից հետո բազմազավակ ծնողներից մեկը կամ ծնողին հավասարեցված անձը «բազմազավակ ընտանիք» կարգավիճակը (այսուհետ՝ Կարգավիճակ) ստանալու համար դիմում է իր փաստացի բնակության վայրի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի տարածքային մարմին (այսուհետ՝ տարածքային մարմին): Կարգավիճակը տրվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասի:

2. Կարգավիճակը հաստատող միասնական նմուշի փաստաթղթի ձևը և տրամադրման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը:

3. Կարգավիճակը տրվում է մինչև բազմազավակ ընտանիքում ծնված (որդեգրված) կրտսեր երեխայի 18 տարեկանը լրանալը (պարտադիր զինվորական ծառայության զորակոչված շարքային կազմի ժամկետային զինծառայող լինելու դեպքում՝ մինչև պարտադիր զինվորական ծառայության ավարտը, իսկ նախնական (արհեստագործական), միջին կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորողի դեպքում՝ մինչև ուսման ավարտը, բայց ոչ ավելի, քան 23 տարին լրանալը):

4. Բազմազավակ այն ընտանիքը, որում ծնողները կամ ծնողին հավասարեցված անձը հանդիսանում են օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող, Կարգավիճակ տրվում է, երբ ծնողները կամ ծնողին հավասարեցված անձը առնվազն երեք տարի անընդմեջ հաշվառված են և փաստացի բնակվում են Հայաստանի Հանրապետությունում:

Հոդված 6. Կարգավիճակի տրամադրման մերժումը

1.Կարգավիճակի տրամադրումը մերժվում է՝

1) Կարգավիճակի տրամադրման համար սույն օրենքով սահմանված հիմք(եր)ի բացակայության,

2) Կարգավիճակ ստանալու համար ծնողի կամ ծնողին հավասարեցված անձի կողմից ոչ հավաստի տվյալներ ներկայացնելու դեպքերում:

2. Ծնողի կամ ծնողին հավասարեցված անձի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա ձևական սխալների և (կամ) փաստաթղթերի ցանկն ամբողջական չլինելու դեպքում Կարգավիճակը տրամադրվում է սխալների շտկումից և (կամ) փաստաթղթերի ցանկը համալրելուց հետո՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներում:

Հոդված 7. Կարգավիճակի դադարեցումը

1. Կարգավիճակը դադարեցվում է, երբ՝

1) համաձայն սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ լրացել է բազմազավակ ընտանիքում ծնված (որդեգրված, խնամվող) կրտսեր երեխայի առավելագույն տարիքը,

2) երեխան (երեխաները) հայտնվել է(են) սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատուն), կամ ստացել է(են) առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ,

3) երեխան (երեխաները) և ծնողները հաշվառել են բնակության տարբեր վայրերում,

4) ծնողները, իսկ միածնող ընտանիքի դեպքում՝ միակ ծնողը, զրկվել են/է ծնողական իրավունքներից:

2. Կարգավիճակը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված երեխայի մահվան դեպքում Կարգավիճակը պահպանվում է, քանի դեռ ընտանիքում առկա է սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տարիքը չլրացած երեխա: Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված երեխայի մահվան դեպքում Կարգավիճակը դադարեցվում է, եթե ընտանիքում առկա չէ սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տարիքը չլրացած երեխա:

Հոդված 8. Բազմազավակ ընտանիքների աջակցության ֆինանսավորման աղբյուրները

1. Սույն օրենքով բազմազավակ ընտանիքների աջակցության նպատակով սահմանված ծախսերը ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

2. Հայաստանի Հանրապետության համայնքները, իրենց իրավասությունների շրջանակներում, կարող են իրականացնել սույն օրենքով չնախատեսված աջակցության այլ միջոցառումներ:

Գ Լ ՈՒ Խ 3
ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոդված 9. Բազմազավակ ընտանիքների աջակցության տրամադրումը

1. Սույն օրենքով սահմանված աջակցություն ստանալու համար բազմազավակ ծնողը դիմում է իր փաստացի բնակության վայրի տարածքային մարմին՝

ներկայացնելով կարգավիճակը հաստատող փաստաթուղթը, ինչպես նաև այլ անհրաժեշտ փաստաթղթերը:

2. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ըստ աջակցության տեսակների:

Հոդված 10. Աջակցության տրամադրման մերժումը

1.Աջակցության տրամադրումը մերժվում է՝

1) աջակցության տրամադրման համար սույն օրենքով սահմանված հիմքերի բացակայության,

2) աջակցության տրամադրման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը չներկայացնելու,

3) աջակցություն ստանալու համար բազմազավակ ծնողի կողմից ոչ հավաստի տվյալներ ներկայացնելու դեպքերում:

2. Ծնողի կամ ծնողին հավասարեցված անձի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա ձևական սխալների և (կամ) փաստաթղթերի ցանկն ամբողջական չլինելու դեպքում աջակցությունը տրամադրվում է սխալների շտկումից և (կամ) փաստաթղթերի ցանկը համալրելուց հետո՝ ընդհանուր հիմունքներով:

Հոդված 11. Բազմազավակ ընտանիքների աջակցության տեսակները

1. Բազմազավակ ընտանիքներին տրվում են աջակցության հետևյալ տեսակները՝

1) սոցիալական աջակցություն,

2) բժշկական օգնություն և սպասարկում, պետական պարտադիր բժշկական ապահովագրություն,

3) բնակարանով և տրանսպորտային միջոցով ապահովման պետական աջակցություն,

4) կենցաղային ապրանքի ձեռքբերման նպատակով պետական աջակցություն,

5) ինքնազբաղվածության ապահովման աջակցություն,

6) երեխաների կրթական աջակցություն:

Հոդված 12. Բազմազավակ ընտանիքների սոցիալական աջակցությունը

1. Բազմազավակ ընտանիքները, ընդհանուր հիմունքներով, ստանում են սոցիալական աջակցություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Բազմազավակ ընտանիքին վճարվող ընտանեկան նպաստի ամսական չափը՝ մեկ անդամի հաշվով, չի կարող պակաս լինել նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքից:

անապահովության գնահատման միավոր ունեցող և ընտանեկան նպաստ չստացող բազմազավակ ընտանիքները ամսական ստանում են պետական սուբսիդիա՝ իրենց կողմից սպառած էլեկտրաէներգիայի, գազի, ջրի ամսական վարձավճարի առնվազն հիսուն տոկոսի չափով, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

4. Բազմազավակ ծնողի համար օրենքով սահմանված կարգով վճարված եկամտային հարկի գումարը վերադարձվում է բազմազավակ ընտանիքի յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ եկամտային հարկի ընդհանուր գումարի հինգ տոկոսի չափով, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

5. Բազմազավակ ծնողի կողմից օրենքով սահմանված կարգով վճարած գյուղատնտեսական նշանակության հողի հարկի և գույքահարկի գումարը վերադարձվում է բազմազավակ ընտանիքի յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ գյուղատնտեսական նշանակության հողի հարկի և գույքահարկի ընդհանուր գումարի տասը տոկոսի չափով, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

6. Բազմազավակ ծնողի տարիքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժին ավելացվում է երեք տարի՝ իր յուրաքանչյուր երեխայի հաշվով:

Հոդված 13. Բազմազավակ ընտանիքների բժշկական օգնությունը և պարտադիր ապահովագրությունը

1. Յուրաքանչյուր բազմազավակ ընտանիք իրավունք ունի բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում ստանալ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում:

2. Բազմազավակ ընտանիքի տասնութ տարին լրացած անդամները ենթակա են պետական պարտադիր բժշկական ապահովագրության, որը պետք է համարժեք լինի հանրային ծառայողների սոցիալական փաթեթում ներառված բժշկական ապահովագրությանը:

3. Բազմազավակ ընտանիքներին բժշկական օգնության և սպասարկման տրամադրման, պետական պարտադիր բժշկական ապահովագրության կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 14. Բազմազավակ ընտանիքներին բնակարանով և տրանսպորտային միջոցով ապահովման պետական աջակցությունը

1. Բազմազավակ ընտանիքներին ցուցաբերվում է բնակարանի կամ բնակելի տան (այսուհետ՝ բնակարան) ձեռք բերելու համար պետական աջակցություն, որոնց տեսակներն են՝

1) բնակարանային ապահովության պետական նպատակային ծրագրերում բազմազավակ ընտանիքներին առաջնահերթ ընդգրկումը,

2) բազմազավակ ընտանիքներին բնակարանի գնման կամ շինարարության համար արտոնյալ ու երկարաժամկետ վարկի տրամադրումը՝

ա. կանխավճարի պետական սուբսիդավորում՝ վարկի գումարի առնվազն հինգ տոկոսի չափով,

բ. տարեկան տոկոսադրույքի պետական սուբսիդավորում՝ առնվազն երկու տոկոսային կետով:

2. Բնակարանով ապահովման պետական աջակցությունը բազմազավակ ընտանիքներին տրամադրվում է մեկ անգամ:

3. Բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովման նվազագույն չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Տասը և ավելի երեխա ունեցող բազմազավակ ընտանիքներին սեփականության իրավունքով տրամադրվում է ավտոմեքենա՝ մեկ անգամ, որի նվազագույն չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 15. Բազմազավակ ընտանիքներին կենցաղային ապրանքի ձեռքբերման նպատակով պետական աջակցությունը

1. Բազմազավակ ընտանիքներին կենցաղային ապրանքի (կահույք, սառնարան, լվացքի մեքենա, հեռուստացույց և այլն) գնման համար տրամադրվում է արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկ, որն առնվազն ներառում է վարկի տարեկան տոկոսադրույքի պետական սուբսիդավորում՝ առնվազն չորս տոկոսային կետով:

2. Կենցաղային ապրանքի ամբողջական ցանկը, այն ձեռքբերելու նպատակով վարկի առավելագույն չափը, տրամադրման պետական աջակցության կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 16. Բազմազավակ ընտանիքներին ինքնազբաղվածության ապահովման աջակցությանը

1. Բազմազավակ ընտանիքներին ընտանեկան ձեռնարկատիրություն հիմնելու նպատակով տրամադրվում է պետական աջակցությամբ արտոնյալ պայմաններով վարկ՝ Հայաստանի Հանրապետության դրամով, առնվազն քսան տարով, որի տարեկան տոկոսադրույքը չի կարող գերազանցել հինգ տոկոսը:

2. Գյուղական համայնքում հաշվառված և փաստացի բնակվող բազմազավակ ընտանիքներին գյուղատնտեսական տեխնիկայի, գյուղատնտեսական նշանակության հողատարածքի և անասունների ձեռքբերման,

գյուղատնտեսությունում արդիական տեխնոլոգիաների ներդրման նպատակով տրամադրվում է պետական աջակցությամբ արտոնյալ պայմաններով վարկ՝ Հայաստանի Հանրապետության դրամով, առնվազն հինգ տարով, որի տարեկան տոկոսադրույքը չի կարող գերազանցել հինգ տոկոսը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նպատակային վարկերի առավելագույն չափերը, տրամադրման կարգն ու լրացուցիչ պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 17. Բազմազավակ ընտանիքի երեխաների կրթական աջակցությունը

1. Բազմազավակ ընտանիքների երեխաները ստանում են աջակցություն նախադպրոցական, նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններ հաճախելու ընթացքում:

2. Նախադպրոցական ուսումնական հաստատություններ բազմազավակ ընտանիքների երեխաների ընդունումը կատարվում է առաջնահերթ կարգով, իսկ ուման վարձը փոխհատուցվում է պետական սուբսիդիայով:

3. Նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում բազմազավակ ընտանիքների երեխաների սովորելու դեպքում՝ ուման վարձի առնվազն յոթանասուն տոկոսը փոխհատուցվում է պետական սուբսիդիայով:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված պետական սուբսիդիայի տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 18. Բազմազավակ ընտանիքների աջակցության տարեկան ծրագիրը

1. Բազմազավակ ընտանիքների աջակցության տրամադրումն իրականացվում է տարեկան ծրագրի (այսուհետ՝ տարեկան ծրագիր) միջոցով, որը մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվելուց հետո տարեկան ծրագիրը ներառվում է համախմբված պետական բյուջեում և ներկայացվում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

Գ Լ ՈՒ Խ 4
ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԾՆՈՂՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ

Հոդված 19. Բազմազավակ ծնողների պետական խրախուսումը

1. Այն բազմազավակ ծնողները, իսկ միածնող ընտանիքի դեպքում՝ միակ բազմազավակ ծնողը, որոնք ծնել կամ որդեգրել են և խնամում են վեց և ավելի երեխա, կարող են պարգևատրվել Ծնողական փառքի մեդալով:

2. Ծնողական փառքի մեդալով պարգևատրումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 5
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 20. Պաշտոնատար անձանց պատասխանատվությունը

1. Սույն օրենքը խախտող պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Հոդված 21. Օրենքի ուժի մեջ մտնելը

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

Հիմնավորում

«Բազմազավակ ընտանիքների մասի» ՀՀ օրենքի նախագծի

Փաստ է, որ վերջին երեք տասնամյակներում ծնունդները շարունակական նվազում են, որը հանգեցրել է նաև բազմազավակ (4 և ավելի երեխա ունեցող) ընտանիքների թվի էական կրճատմանը: 2001 թվականի մարդահամարի տվյալներով 4 և ավելի երեխա ունեցող տնային տնտեսությունների թիվը կազմել է շուրջ 31000, իսկ 2011 թվականի մարդահամարի տվյալներով՝ շուրջ 13000: Եվ այս բացասական միտումները պահպանվում են: Ներկայումս բազմազավակ ընտանիքների շուրջ կեսն անապահով է:

Բնականաբար այս իրավիճակում անվիճելի և առաջնային է բազմազավակ ընտանիքներին պետական նպատակային աջակցության անհրաժեշտությունը, որը նաև Սահմանադրության պահանջն է և պետական աջակցության այս ձևի իրավական հիմքերը պետք է մանրամասն ամրագրվեն օրենքով:

Մինչև 2018 թվականի իշխանափոխությունը, նախորդ կառավարությունն իր գործունեության 2017 թվականի ծրագրի համաձայն մշակել էր բազմազավակ ընտանիքների աջակցությանը վերաբերող օրենքի նախագիծ, որն այդպես էլ շարունակական քննարկումների արդյունքում չամբողջականացվեց և չընդունվեց:

Հատկանշական է, որ այդ նախագիծը դրվել էր նաև հանրային քննարկման: Հանրային քննարկումներին մասնակցել և իրենց կարծիքն են ներկայացրել «Բազմազավակ մայրերի աջակցության միավորում», «Իրավաբանների և հոգեբանների միջազգային ասոցիացիա», «Լույս» ՏՀԿ», «Սոցիալական խորհրդատվական կենտրոն», «Էխո», «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն», «Իմ ուղին», «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպությունները, ոլորտի փորձագետները և բազմազավակ ծնողները:

2018 թվականի խորհրդարանական արտահերթ ընտրություններից հետո՝ մինչ այժմ ձևավորված կառավարություններն իրենց օրակարգից հանել են բազմազավակ ընտանիքների աջակցության մասին օրենքի ընդունումը:

Անտեսվում է ՀՀ Սահմանադրության պահանջը և պետությունը օրենքով չի ստանձնում պարտավորություն՝ բազմազավակ ընտանիքներին աջակցելու և բազմազավակությունը իրապես խթանելու ուղություններով:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 83 և 86-րդ հոդվածներով ամրագրված է. «յուրաքանչյուր ոք ունի բազմազավակության դեպքում սոցիալական ապահովության իրավունք, որը պետք է սահմանվի օրենքով, իսկ սոցիալական քաղաքականության հիմնական նպատակներից պետք է լինեն ծնելիության և բազմազավակության խթանումը»:

Սակայն հանրային քննարկման ներկայացված չի համապատասխան օրենքի նախագիծ, իսկ ՀՀ 2019-2021 թվականների պետական բյուջեներով, 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով, ինչպես նաև օրերս ԱԺ ներկայացված 2022 թվականի պետական բյուջեի նախագծով բազմազավակ ընտանիքների աջակցության պետական ծրագիր և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսված չեն:

Իսկ օբյեկտիվ իրականությունը բոլորովին այլ վերաբերմունքի և մոտեցումների պահանջներ է դնում, որոնք հետևողականորեն անտեսվում են օրվա իշխանությունների կողմից: Տարբեր վերլուծաբաններ, քաղաքական գործիչներ բազմիցս և առարկայական բարձրաձայնում ու փաստարկում են, որ ժողովրդագրական իրավիճակը մեր երկրում հասել է ճգնաժամային փուլի: Վաղուց արդեն հրամայական անհրաժեշտություն է դարձել ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղված պետական համակողմանի ծրագիրը՝ թիրախավորված արդյունքներով, պետական կայուն ֆինանսավորմամբ:

Մասնավորապես, ժողովրդագրական իրավիճակի բարելավման հիմնական նպատակադրումներից պետք է լինեն ծնունդների աճի խթանումը և բազմազավակության խրախուսումը և այս նպատակադրումների համար լիարժեք իրավական հիմքերի ապահովումը:

Փոխարենը օրվա իշխանությունները օրակարգ են բերում Ստամբուլյան կոնվենցիայի վավերացումն ու մեր ժողովրդի ավանդական ընտանեկան արժեքների այլասերման համար իրավական այսօրինակ հիմքերի ապահովումը:

Ի վերջո, պետությունը պետք է հետևողականորեն ստանձնի բազմազավակությունը խթանելու իր պարտավորությունը: Իսկ պետական աջակցության այս տեսակը պետք է լինի շարունակական և լիարժեք՝ ընտանիքների գնահատված կարիքներին համապատասխան:

Այս հիմնանպատակներին հասնելու համար անհրաժեշտ է նաև օրենքով նախատեսել պետական աջակցության այս ձևի ֆինանսավորման կայուն հիմքերն ու ուղությունները, ինչպես նաև բազմազավակ ընտանիքներին տրվող լրացուցիչ արտոնությունները:

Կարևորելով վերը բերված հիմնախնդիրները և դրանց համակարգային լուծումներն ապահովելու նպատակադրմամբ՝ իրականացվել են այս ոլորտի մասնագիտական վերլուծություններ, առանձնացվել են բազմազավակ ընտանիքներին անհրաժեշտ պետական աջակցության առաջնային ուղությունները, մշակվել են դրանց տրամադրման հիմնական պայմանները և կառուցակարգը:

Նշված կարգավորումների իրավական հիմքերն ապահովելու նպատակով մշակվել է «Բազմազավակ ընտանիքների մասի» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ օրենքի նախագիծ): Օրենքի նախագիծը մշակվել է ՀՀ Սահմանադրության 83 և 86-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

Օրենքի նախագիծը մշակվել է ուսումնասիրությունների և վերլուծությունների ամփոփ արդյունքների հիման վրա, ներառյալ նաև միջազգային լավագույն փորձի

ուսումնասիրությունները (միջազգային փորձի ուսումնասիրության ամփոփ տեղեկանքը կցված է սույն նախագծին):

Օրենքի նախագծով առաջարկվող բազմազավակ ընտանիքների աջակցության վեց հիմնական ուղղությունները և դրանց կոնկրետ բովանդակությունը մշակվել են՝ հաշվի առնելով նաև մինչև 2018 թվականի իշխանափոխությունը կառավարության կողմից շրջանառված՝ նույնանուն օրենքի նախագծի կարգավորումները, հանրային քննարկումների ընթացքում շահագրգիռ կողմերի ներկայացրած առաջարկությունները:

Օրենքի նախագծով՝

- հատկորոշվում են «բազմազավակ ընտանիք», ինչպես նաև օրենքի նախագծում օգտագործվող այլ հիմնական հասկացությունները,
- կարգավորվում են բազմազավակ ընտանիքի կարգավիճակի տրման, մերժման և դադարեցման հետ կապված հարաբերությունները,
- սահմանվում են բազմազավակ ընտանիքներին տրամադրվող աջակցության հիմնական նպատակները, ուղղությունները, տեսակներն ու պայմանները, ընդ որում՝ աջակցության առանձին տեսակների տրամադրման կարգերի հաստատումը օրենքով վերապահվում է ՀՀ կառավարությանը,
- նախատեսվում է, որ բազմազավակ ընտանիքներին պետական աջակցությունը պետք է տրամադրվի յուրաքանչյուր տարի մշակվող և համախմբված պետական բյուջեում ներառված տարեկան ծրագրի միջոցով, որը կֆինանսավորվի ՀՀ պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից,
- նախատեսվում է, որ համայնքները կարող են իրականացնել սույն օրենքով չնախատեսված՝ համայնքային աջակցության այլ ծրագրեր,
- նախատեսվում է նաև բազմազավակ ընտանիքի բարոյահոգեբանական խրախուսում՝ Ծնողական փառքի մեդալով պարգևատրմամբ:

Օրենքի նախագծով առաջարկվում՝ բազմազավակ ընտանիքների պետական աջակցության հիմնական նպատակներն են՝

- բավարարել առաջնահերթ պահանջմունքները՝ գնահատված կարիքներին և աջակցության առաջարկվող ձևերին համապատասխան,
- նպաստել բազմազավակ ընտանիքի ինքնապահովմանն ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը,
- կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը,
- բարելավել ժողովրդագրական իրավիճակը:

Օրենքի նախագծով առաջարկվում են բազմազավակ ընտանիքներին ներկայումս տրամադրվող ու լրացուցիչ նախատեսվող աջակցության և արտոնությունների հետևյալ տեսակները՝

1՝ Սոցիալական աջակցություն, ներառյալ՝ ընտանեկան նպաստի երաշխավորված նվազագույն չափ (առնվազ մեկ շնչի հաշվով նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը), սպառած էլեկտրաէներգիայի, գազի, ջրի ամսական վարձավճարի պետական մասնակի սուբսիդավորում, բազմազավակ

ընտանիքի յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ բազմազավակ ծնողի եկամտային հարկի, գույքահարկի և հողի հարկի մասնակի վերադարձ, բազմազավակ ծնողի տարիքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի ավելացում: Աջակցության այս տեսակը մշակվել է հիմք ընդունելով նաև Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Մոլդովայի, Ուզբեկստանի, ԵՄ անդամ երկրների, հատկապես Ֆրանսիայի փորձը:

2. Բժշկական օգնություն և սպասարկում, ներառյալ՝ ընտանիքի բոլոր անդամների համար պետական պարտադիր բժշկական ապահովագրություն: Աջակցության այս տեսակը մշակվել է հիմք ընդունելով նաև Ռուսաստանի, Մոլդովայի փորձը:

3. Բնակարանով և տրանսպորտային միջոցով ապահովման պետական աջակցություն: Աջակցության այս տեսակը մշակվել է հիմք ընդունելով նաև ԵՄ անդամ երկրների, Բելառուսի, Ղազախստանի, Մոլդովայի, Ուզբեկստանի փորձը:

4. Կենցաղային ապրանքի ձեռքերման նպատակով աջակցություն: Աջակցության այս տեսակը մշակվել է հիմք ընդունելով հիմնականում Ֆրանսիայի, Ռուսաստանի փորձը:

5. Ինքնազբաղվածության ապահովման աջակցություն: Աջակցության այս տեսակը մշակվել է հիմք ընդունելով նաև Ռուսաստանի, Մոլդովայի, Ուզբեկստանի, ինչպես նաև Շվեդիայի փորձը:

6. Երեխաների կրթական աջակցություն՝ ուսման վարձի պետական մասնակի սուբսիդավորում: Աջակցության այս տեսակը մշակվել է հիմք ընդունելով ուսումնասիրված գրեթե բոլոր երկրների փորձը:

Բազմազավակ ընտանիքների աջակցության **միջազգային փորձի ուսումնասիրության ամփոփ արդյունքները** բերված են ստորև.

Բելառուս

Համաձայն Բելառուսի Հանրապետության «Կամուսնության և ընտանիքի մասին» օրենսգրքի 62-րդ հոդվածի՝ բազմազավակ ընտանիքն այն ընտանիքն է, որում դաստիարակվում են երեք և ավելի անչափահաս երեխաներ[1]:

Բելառուսի Հանրապետության օրենսդրությունը նախատեսում է հետևյալ առավելությունները բազմազավակ ընտանիքների համար:

Համաձայն «Կենսաթոշակային ապահովման մասին» օրենքի հինգ և ավելի երեխաներ ծնած և մինչև 8 տարեկանը մեծացրած կանայք առնվազն 15 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում, 50 տարին լրանալուն պես ծերության կենսաթոշակի իրավունք ունեն:

[1] https://kodeksy-by.com/kodeks_rb_o_brake_i_semje.htm

Կանայք, ովքեր հինգ և ավելի երեխա են ծնել և մեծացրել մինչև 16 տարեկանը և ունեն գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ոլորտում առնվազն 10 տարվա աշխատանքային ստաժ իրավունք ունեն թոշակի անցնել՝ անկախ տարիքից:

Երիտասարդ և բազմազավակ ընտանիքները, որոնք գրանցված են որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ազատվում են եկամտահարկից: Ինչպես նաև իրականացվում է բանկերի կողմից շինարարության (վերակառուցման) կամ բնակելի տարածքների ձեռքբերման համար տրամադրված վարկերի պարտքի մարում՝ օրենսդրական ակտերով նախատեսված դեպքերում (հոդված 163):

Ծնողներին, որոնք ունեն մինչև տասնութ տարեկան երկու կամ ավելի երեխաներ կամ մինչև տասնութ տարեկան հաշմանդամ երեխաներ, տրվում է ստանդարտ հարկային նվազեցում ամսական 460,000 բելառուսական ռուբլու տեսքով մեկ երեխայի համար (հոդված 164):

Բազմազավակ ընտանիքին պատկանող բազմաբնակարան շենքում բնակելի տարածքները ազատվում են անշարժ գույքի հարկից (հոդված 186):

Բազմազավակ ընտանիքին տրամադրվող հողատարածքներն ազատվում են հողի հարկից (հոդված 194):

Բազմազավակ մայրերը նոտարական գործողություններ կատարելիս ազատվում են պետական տուրքից (հոդված 257).

Բազմազավակ ընտանիքներն իրավունք ունեն ստանալու արտոնյալ վարկեր՝ բնակելի տարածքների կառուցման (վերակառուցման) կամ ձեռքբերման կամ միանվագ սուբսիդիաներ ստանալու համար: Առավելագույն ժամկետը, որի համար բազմազավակ ընտանիքներին տրամադրվում են արտոնյալ վարկեր 40 տարի է (տարեկան 1 տոկոս):

Բազմազավակ ընտանիքների երեխաներն միջնակարգ մասնագիտացված, բարձրագույն կրթություն ստանալու ընթացքում Բելառուսի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով կարող են օգտվել զեղչերից:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի դիմաց ծնողների վճարը կրճատվում է 50%-ով, իսկ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող բազմազավակ ընտանիքների երեխաներին տրամադրվում է անվճար սնունդ: 50 տոկոսով կրճատվում է դասագրքերի և (կամ) ուսումնաօժանդակ նյութերի օգտագործման վճարը:

Կանայք, ովքեր ծննդաբերել և մեծացրել են հինգ և ավելի երեխաներ, պարգևատրվում են Մայրության շքանշանով: Մայրության շքանշանը շնորհվում է, երբ լրանում է հինգերորդ երեխայի մեկ տարեկանը, և եթե այս մոր մնացած երեխաները ողջ են[2]:

---

[2] https://www.fr.gov.by/administration/departments/department-of-social-protection/informatsiya-upravleniya-sotsialnoy-zashchity/?ELEMENT_ID=4568

Ղազախստան

Ղազախստանում բազմազավակ ընտանիք է համարվում այն ընտանիքը, որտեղ ապրում են 4 կամ ավելի անչափահաս երեխաներ: Բազմազավակ մայրերը, ովքեր ծննդաբերել և մեծացրել են 6 երեխա, արժանանում են «Կումիս ալկա» կախազարդին, իսկ նրանք, ովքեր ծննդաբերել և մեծացրել են 7 և ավելի երեխաներ՝ «Ալթին ալկա» կախազարդով:

Չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների կամ մինչև 23 տարեկան լրիվ դրույքով ուսանողների համար նշանակվում է նպաստ՝ անկախ ընտանիքի եկամուտից՝

չորս երեխայի համար՝ 46,760 տենգե,
հինգ երեխայի համար՝ 58,457 տենգե,
վեց երեխայի համար՝ 70,154 տենգե,
յոթ երեխայի համար՝ 81 852 տենգե,
ութ և ավելի երեխաների համար՝ 81 852 տենգե[3]:

«Ալթին ալկա», «Կումիս ալկա» կախազարդերով պարգևատրված կամ նախկինում «Մայր հերոսուհի» կոչում ստացած բազմազավակ մայրեր, բազմազավակ ընտանիքները Պետական բնակարանային ֆոնդից բնակատեղի ստանալու առաջնահերթ իրավունք ունեն, ինպես նաև ազատվում են մի շարք հարկերի և պետական տուրքերի վճարումից՝ տրանսպորտային միջոցների հարկից, գույքահարկից, նոտարական գործողություններ կատարելիս պետական տուրքերից և այլն:

Միևնույն ժամանակ, կանայք, ովքեր ծնել են (որդեգրել են) 5 և ավելի երեխա և մեծացրել մինչև 8 տարեկան, 53 տարին լրանալուց հետո կենսաթոշակային վճարումների իրավունք ունեն[4]:

Ղրղզստան

Համաձայն Ղրղզստանի Հանրապետության «Ղրղզստանի Հանրապետությունում բնակչության սոցիալական ծառայությունների հիմունքների մասին» 2001 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 111 օրենքի 3-րդ հոդվածի, բազմազավակ մայր է համարվում այն մայրը, որը ծննդաբերել և մեծացրել է հինգ կամ ավելի շատ երեխաներ:

---

[3] 1 ԱՄՆ դոլարը = 425,296 տենգե

[4] https://egov.kz/cms/ru/articles/family_support/posobiya-i-lgoty?fbclid=IwAR0xxt7LI6mhCtf8-snvC_sWuYjCM5IMjTAqQIiq5VjiuOM9h_BvliPTr9o

Համաձայն «Ղրղզստանի Հանրապետությունում պետական նպաստների մասին» օրենքի՝

յուրաքանչյուր երեխայի ծննդյան միանվագ նպաստ՝ 4 հազար սոմ.

մինչև երեք տարեկան յուրաքանչյուր երեխայի խնամքի ամսական նպաստ՝ 700 սոմ.

ամսական նպաստ 3-ից 16 տարեկան երեք և ավելի երեխաներ ունեցող քաղաքացիներին (ընտանիքներին)՝ 500 սոմ:

Գոյություն ունի նաև օրենքով սահմանված պետական վճարումների ցանկ.

Ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաները իրավունք ունեն ստանալ ամսական ֆինանսական օգնություն պետությունից՝ ընդամենը 810 սոմ: Այն կարող են ստանալ միայն այն ընտանիքները, որոնցում յուրաքանչյուր անձ ունի 900 սոմից ոչ ավելի ընդհանուր եկամուտ[5]:

Ռուսաստան

Ռուսաստանում բազմազավակ ընտանիքը երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքն է: Համաձայն դաշնային օրենքի՝ սուբյեկտներին լիազորված է որոշելու, թե ովքեր են պատկանում այս կատեգորիային՝ հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները: Որոշ շրջանների իշխանությունները լրացուցիչ աջակցում են բազմազավակ ընտանիքներին՝ երեխաների տարիքը հասցնելով 21 կամ 23 տարեկան: Այս դեպքում երեխան պետք է սովորի կամ զորակոչով ծառայի բանակում[6]:

Բազմազավակ ընտանիքներին տրամադրում են՝

հատուցում ջեռուցման, ջրի, գազի և էլեկտրաէներգիայի օգտագործման համար սահմանված վճարի՝ առնվազն 30 տոկոսի չափով,

մինչև 6 տարեկան երեխաների համար դեղատոմսով դեղերի անվճար տրամադրում,

միջքաղաքային տրանսպորտով անվճար երթևեկություն (տրամվայ, տրոլեյբուս, մետրո և քաղաքային ավտոբուսներ (բացառությամբ տաքսիների), ինչպես նաև ծայրամասային և միջքաղաքային գծերի ավտոբուսներով հանրակրթական դպրոցների աշակերտների համար,

նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդունելություն,

անվճար սնունդ (նախաճաշ և ճաշ) հանրակրթական և արհեստագործական ուսումնարանների ուսանողների համար,

սահմանված չափորոշիչներին համապատասխան անվճար դպրոցական համազգեստի կամ մանկական հագուստի տրամադրում, ինչպես նաև սպորտային

---

[5] https://law.kg/question/posobiya-dlya-mnogodetnoy-semi-v-kyrgyzstane/

[6] https://ria.ru/amp/20210414/lgoty-1728217952.html?fbclid=IwAR37-ewHJuDwFR9IY_G4eqA5_Cl-Fpw4rAa9RyxSqOQ-2DNk4YFgPmczlwY

համազգեստ հանրակրթական դպրոցում երեխաների կրթության ողջ ժամանակահատվածի համար,

ամսական մեկ օր անվճար այցելություններ թանգարաններ, մշակույթի և հանգստի այգիներ, ինչպես նաև ցուցահանդեսներ:

Զբաղվածության տարածաշրջանային ծրագրեր մշակելիս հաշվի են առնում բազմազավակ ծնողների աշխատանքի տեղավորման անհրաժեշտությունը, նրանց աշխատանքի հնարավորությունը՝ աշխատանքի ճկուն ձևերի (կես դրույքով, տնային աշխատանք, ժամանակավոր) պայմաններով[7]:

Ընտանիքներին, որոնց եկամուտը չի գերազանցում մեկ շնչի հաշվով կառավարության սահմանած կենսապահովման նվազագույնը 3,5 անգամ, ապահովվում է տարածաշրջանային մայրության (ընտանեկան) կապիտալով երրորդ և հաջորդ երեխաների ծննդյան (որդեգրման) ժամանակ: Միևնույն ժամանակ, ընտանեկան կապիտալ տրամադրելու իրավունքը կրկին ծագում է յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան պահին:

Տարածաշրջանային մայրության կապիտալի չափը հետևյալն է.

երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան ժամանակ՝ 100 հազար ռուբլի,

հինգերորդ և հաջորդ երեխաների ծննդյան ժամանակ՝ 200 հազար ռուբլի,

երեք և ավելի երեխաների միաժամանակյա ծնունդով՝ 1միլիոն ռուբլի:

Այս միջոցները կարող են օգտագործվել բազմազավակ ընտանիքի կողմից բնակարանային պայմանների բարելավման համար, ներառյալ բնակելի թաղամասերի վերանորոգման իրականացումը, երկարաժամկետ իրերի (կենցաղային տեխնիկա, կահույք, մեքենաներ) գնումը, երեխայի կամ մոր զննումն ու բուժումը: Դուք կարող եք օգտագործել տարածաշրջանային ընտանեկան կապիտալը երեխայի ծննդյան (որդեգրման) օրվանից երեք տարվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան մեկ տարեկան[8]:

Մոլդովա

Բազմազավակ ընտանիքն այն ընտանիքն է, որն ունի 3 և ավելի երեխա, այդ թվում՝ որդեգրված և նրանց մեծացնում է մինչև տասնութ տարեկան կամ մինչև ուսումն ավարտելը, բայց ոչ ավելի, քան մինչև նրանք դառնում են 23 տարեկան:

Համաձայն Մոլդովայի Հանրապետության «Բազմազավակ ընտանիքներին պետական աջակցության մասին» օրենքի տրվում են հետևյալ իրավունքները և արտոնությունները

երեք երեխա մեծացնող ընտանիքների համար սահմանված է ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, գազի և էլեկտրաէներգիայի վճարի 20%-ի չափով զեղչ (4 երեխայի համար 30%, 5 և ավել երեխայի համար 50%),

---

[7] https://docs.cntd.ru/document/9003021

[8] https://social.gov39.ru/informatsiya/important/sotsialnye-vyplaty/mnogodetnym-semyam/

մինչև 6 տարեկան բազմազավակ ընտանիքների երեխաներին բժշկական դեղատոմսով դեղերի անվճար տրամադրում,

բազմազավակ ընտանիքների երեխաների համար անվճար երթևեկություն քաղաքային տրանսպորտի բոլոր տեսակներով (բացառությամբ տաքսիների),

համայնքային նախադպրոցական ուսումնական կազմակերպություններ և գիշերօթիկ հաստատություններ երեխաների առաջնահերթ ընդունելություն՝ այդ կազմակերպությունների վճարից ազատելով,

յուրաքանչյուր առաջին դասարանցի երեխայի համար դպրոցական պարագաներ գնելու համար փոխհատուցում,

պետական և քաղաքային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածքների առաջնահերթ տրամադրումը բազմազավակ ընտանիքներին,

բազմազավակ ծնողների աշխատանքի տեղավորման լրացուցիչ երաշխիքների ապահովումը զբաղվածության խթանման նպատակով հանրապետական և տարածքային նպատակային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով,

նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության պետական կազմակերպություններում համապատասխան մակարդակի կրթություն առաջին անգամ ստանալիս ուսման վարձերի վճարման 50% զեղչ[9]:

Ուզբեկստան

Ուզբեկստանում բազմազավակ ընտանիք է համարվում այն ընտանիքը, որտեղ պահվում են չորս և ավելի անչափահաս երեխաներ:

Բազմազավակ ընտանիքների համար գործում են մի շարք սոցիալական երաշխիքներ:

Բնակարանային ավելի լավ պայմանների կարիք ունեցող բազմազավակ ընտանիքները կարող են բնակարան ձեռք բերել բազմաբնակարան շենքերում՝ արտոնյալ վարկով:

Եթե տնային տնտեսությունն ունի անհրաժեշտ պայմաններ, այդ թվում՝ հողամասի առկայություն, ապա բազմազավակ ընտանիքներին կարող են անհատույց տրամադրվել խոշոր եղջերավոր անասուն:

Բազմազավակ ընտանիքները, ովքեր կորցրել են իրենց կերակրողին, ազատվում են հողի հարկից:

Ձեռնարկատիրական ծրագրեր իրականացնելիս բազմազավակ ընտանիքներին տրամադրվում է դրամական օգնություն՝ Ձեռնարկատիրության աջակցության պետական հիմնադրամի միջոցների հաշվին:

Բազմազավակ ընտանիքների տղաներն ու աղջիկները կարող են օգտվել նախադպրոցական ընդունելության արտոնություններից:

---

[9] http://minsoctrud.gospmr.org/lgotyi_mnogodetnyim_semyam/

Բազմազավակ ընտանիքների շնորհալի երեխաները ստանում են ֆինանսական աջակցություն: Նրանց տրամադրվում է նաև դպրոցական համազգեստ, դպրոցական պարագաների հիմնական տեսակներ, գեղարվեստական գրականություն: Բացի այդ ապահովում է բաժանորդագրություն մանկական թերթերի և ամսագրերի, հանրապետական ճամբարներում հանգստի կազմակերպում, վճարվում է ճանապարհորդության ծախսերը ամբողջ երկրում և այլն[10]:

Ֆրանսիա

Յոթ տեսակի նպաստներ են վճարվում ընտանիքներին՝ անկախ նրանց եկամուտների մակարդակից: Դրանց թվում, օրինակ ընտանեկան նպաստ՝ սկսած երկրորդ երեխայից: Վճարվում է լրացուցիչ նպաստ այն դեպքում, երբ ծնողը ազատվում է աշխատանքից կամ անցնում է ոչ լրիվ աշխատանքային ռեժիմի՝ մինչև 3 տարեկան երեխաներին խնամելու համար:

Ընտանեկան նպաստները վճարվում են, եթե ընտանիքում 20 տարեկանից ցածր առնվազն երկու երեխա կա: Ընտանիքն իրավասու է օգտվել այս նպաստից՝ անկախ ամուսնական կարգավիճակից և եկամտի մակարդակից: Ընտանեկան նպաստներն են՝ 129,21 եվրո ամսական 2 երեխայի համար, 294,76 եվրո ամսական 3 երեխայի համար, 165,55 եվրո ամսական յուրաքանչյուր լրացուցիչ երեխայի համար: Միևնույն ժամանակ, երեխաների տարիքի հետ մեծանում է ընտանեկան նպաստների չափը:

Ֆրանսիայում բազմազավակ ընտանիքների համար կա պետական ծրագիր, որն առաջարկում է բազմազավակ ընտանիքներին նպաստներ և սուբսիդիաներ՝ որպես ծնելիության խթանման ընդհանուր պետական քաղաքականության մաս: Բազմազավակ ընտանիքները օգտվում են հարկային արտոնություններից, իսկ յուրաքանչյուր նորածին նվազեցնում է հարկային բազան:

Այսպիսով, չորս երեխա ունեցող ընտանիքը գործնականում ազատված է հարկերի վճարումից[11]:

Մինչև 18 տարեկան առնվազն 3 երեխա ունեցող ընտանիքներին տրվում է բազմազավակ ընտանիքի քարտ, որը վերջիններիս հնարավորություն է տալիս որոշ կազմակերպություններում քարտը ներկայացնելիս օգտվել գնային արտոնություններից, մասնավորապես՝ կինոթատրոններ հաճախելիս, կենցաղային տեխնիկա ձեռք բերելուց և այլն:

Միջին հաշվով, բազմազավակ ընտանիքների համար տարեկան տրվում է բազմազավակ ընտանիքի 850000 քարտ: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ ունի անհատականացված պատճենը[12]:

---

[10] https://uz.sputniknews.ru/20201007/Kakie-lgoty-polozheny-mnogodetnym-semyam-v-Uzbekistane-15130721.html

[11] https://zen.yandex.ru/media/id/5e2bfdc2028d6800b09b9a3b/franciia-podderjka-mnogodetnyh-semei-5e46a30267bb927569fae46c

Ամփոփ գնահատական

«Բազմազավակ ընտանիքների մասի» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցների

Նախագծով նախատեսված է, որ բազմազավակ ընտանիքների աջակցության տրամադրումն իրականացվում է տարեկան ծրագրի միջոցով, որը ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո ներառվում է համախմբված պետական բյուջեում:

Ստորև ներկայացվում է նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցների ամփոփ գնահատումը՝ տարեկան կտրվածքով, ըստ նախագծով նախատեսվող պետական աջակցության ուղղությունների:

Բազմազավակ ընտանիքների թիվը հաշվարկների համար ընդունվում է 13000-ը, որոնցի ընտանեկան նպաստ ստացող՝ շուրջ 6000-ը: Բազմազավակ ընտանիքի անդամների միջին թիվը հաշվարկների համար ընդունվում է 6-ը, որնցից 3-ը՝ 18 տարին լրացած:

1⃣ Սոցիալական աջակցություն

Բազմազավակ ընտանիքներին վճարվող ընտանեկան նպաստի ամսական չափը՝ մեկ անդամի հաշվով, նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքին հավասարեցնելու համար տարեկան լրացուցիչ անհրաժեշտ կլինի շուրջ **25,92 միլիարդ դրամ**: 1 անձի հաշվով նվազագույն սպառողական զամբյուղի ամսական միջին արժեքը կազմում է 70000 դրամ, իսկ 1 անձի հաշվով ընտանեկան նպաստի միջին չափը 10000 դրամ:

Ընտանեկան նպաստ ստացող բազմազավակ ընտանիքներին սպառած էլեկտրաէներգիայի, գազի, ջրի ամսական վարձավճարի մասնակի սուբսիդավորման համար տարեկան լրացուցիչ անհրաժեշտ կլինի շուրջ **1 միլիարդ դրամ**: Այս դեպքում 1 ընտանիքի միջին ամսական սուբսիդավորման չափը գնահատվել է 15000 դրամ:

Բազմազավակ ծնողի եկամտային հարկի գումարը վերադարձնելու համար տարեկան լրացուցիչ անհրաժեշտ կլինի շուրջ **0,65 միլիարդ դրամ**: Գնահատվում է, որ բազմազավակ ընտանիքների շուրջ կեսում ծնողներից առնվազն մեկը աշխատում է՝ առնվազն նվազագույն ամսական աշխատավարձով:

Բազմազավակ ծնողի կողմից վճարվող գյուղատնտեսական նշանակության հողի հարկի և գույքահարկի գումարը վերադարձնելու համար տարեկան լրացուցիչ

---

[12] https://www.mes-allocs.fr/guides/allocations-familiales/carte-famille-nombreuses/#Quelles_sont_les_conditions_liees_a_la_carte_familles_nombreuses

անհրաժեշտ կլինի շուրջ **0,15 միլիարդ դրամ**: Գնահատվում է, որ բազմազավակ ընտանիքների շուրջ 25 տոկոսը վճարում են այս հարկատեսակները, որի պետական մասնակի սուբսիդավորման տարեկան չափը մեկ ընտանիքի հաշվով գնահատվում է 50000 դրամ:

Բազմազավակ ծնողի տարիքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժն ավելացնելու համար տարեկան լրացուցիչ անհրաժեշտ կլինի **շուրջ 0,19 միլիարդ դրամ**: Գնահատվում է, որ տարեկան միջինը բազմազավակ ծնողների շուրջ 10 տոկոսին նշանակվում է տարիքային կենսաթոշակ, որի դեպքում ավելացվող աշխատանքային ստաժը մեկ ծնողի հաշվով միջինը կկազմի 12 տարի:

2/ Պարտադիր բժշկական ապահովագրության ապահովում

Բազմազավակ ընտանիքի տասնութ տարին լրացած անդամների պետական պարտադիր բժշկական ապահովագրության համար տարեկան լրացուցիչ անհրաժեշտ կլինի շուրջ **1,56 միլիարդ դրամ**: 1 անձի հաշվով պարտադիր բժշկական ապահովագրության վճարի տարեկան գումարը գնահատվում է միջինը 40000 դրամ:

3/ Բնակարանով և տրանսպորտային միջոցով ապահովում

Բազմազավակ ընտանիքներին բնակարանի գնման կամ շինարարության արտոնյալ վարկի տրամադրման համար տարեկան լրացուցիչ անհրաժեշտ կլինի շուրջ **1,5 միլիարդ դրամ**: Գնահատվում է, որ բազմազավակ ընտանիքների շուրջ 25 տոկոսը կդառնան աջակցության այս ծրագրի շահառուներ: 1 շահառուի հաշվով այս ուղղությամբ պետական բյուջեի լրացուցիչ ծախսը տարեկան գնահատվում է շուրջ 500000 դրամ:

Տասը և ավելի երեխա ունեցող բազմազավակ ընտանիքներին սեփականության իրավունքով ավտոմեքենա տրամադրելու համար տարեկան լրացուցիչ անհրաժեշտ կլինի շուրջ **0,025 միլիարդ դրամ**: Գնահատվում է, որ ավտոմեքենա կտրամադրվի տարեկան շուրջ 10 ընտանիքներ, իսկ 1 ավտոմեքենայի միջին գինը՝ 2,5 միլիոն դրամ:

4/ Կենցաղային ապրանքի ձեռքբերման աջակցություն

Բազմազավակ ընտանիքներին կենցաղային ապրանքի գնման արտոնյալ վարկի տրամադրման համար տարեկան լրացուցիչ անհրաժեշտ կլինի շուրջ **0,65 միլիարդ դրամ**: Գնահատվում է, որ բազմազավակ բոլոր ընտանիքները կդառնան աջակցության այս ծրագրի շահառուներ: 1 շահառուի հաշվով այս ուղղությամբ պետական բյուջեի լրացուցիչ ծախսը տարեկան գնահատվում է շուրջ 50000 դրամ:

5/ Ինքնազբաղվածության ապահովման աջակցություն

Բազմազավակ ընտանիքների չափահաս անդամների միկրոբիզնես հիմնելու համար տարեկան լրացուցիչ անհրաժեշտ կլինի շուրջ **1,5 միլիարդ դրամ**: Գնահատվում է, որ բազմազավակ ընտանիքների շուրջ 25 տոկոսը կդառնան աջակցության այս ծրագրի շահառուներ: 1 շահառուի հաշվով այս ուղղությամբ պետական բյուջեի լրացուցիչ ծախսը տարեկան գնահատվում է շուրջ 500000 դրամ:

6/ Երեխաների կրթական աջակցություն

Բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններ սովորող բազմազավակ ընտանիքների երեխաների ուսման վարձի մասնակի տոկոսը փոխհատուցման համար համար տարեկան լրացուցիչ անհրաժեշտ կլինի շուրջ 1 **միլիարդ դրամ**: Գնահատվում է, որ բազմազավակ ընտանիքների շուրջ 25 տոկոսում կա բուհի առնվազն 1 ուսանող: 1 ուսանողի հաշվով այս ուղղությամբ պետական բյուջեի լրացուցիչ ծախսը տարեկան գնահատվում է շուրջ 350000 դրամ:

Ընդհանուր գնահատված տարեկան լրացուցիչ ծախս

Բերված գնահատումների ամփոփ արդյունքներով՝ բազմազավակ ընտանիքների աջակցության տարեկան ծրագրի իրականացման համար պետական բյուջեից լրացուցիչ կպահանջվի շուրջ **34,145 միլիարդ դրամ**: